

«Բժշկական աջակցության և առաջին բուժօգնության դասընթացներ ականային գործողությունների համար»
 ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագիրը նպատակ ունի ցուցաբերել բժշկական օժանդակություն ականազերծման գործողություններին, ականներից տուժած անձնաց տալ բժշկական խորհրդատվություն, ուսուցիչներին և աշակերտներին ուսուցանել առաջին բուժօգնության հմտությունները և իրազեկել ականների վտանգի մասին՝ անվտանգ վարքագծի կանոններ դրսևորելու միջոցով հնարավոր ականային պատահարներից խուսափելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատուն (ՀՀ, քաղ. Երևան, Բաբայան 23/4, հեռ. +37411523010)
4.	Ծրագրի կատարողը	Ականազերծման և ուտիլիզացիայի հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Հանրապետության 67, 56 շինություն, ՀՎՀՀ՝ 02624482), Հեռ.՝ 011 55 70 80
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ ականային վտանգ պարունակող մարզերը՝ Սյունիք, Տավուշ, Գեղարքունիք և Վայոց Ձոր: Բնագավառը՝ հանրային անվտանգության:
6.	Ծրագրի բյուջեն	39, 834, 196.67 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացողները՝ ականազերծողներ, ՀՀ ականային վտանգ պարունակող 4 մարզերի (Սյունիք, Տավուշ, Գեղարքունիք և Վայոց Ձոր) դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ, ականներից տուժած անձինք (մոտ 40 000 անձ):
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի հուլիսի 8-ից մինչև 2022 թվականի մարտի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և	Ծրագրի շրջանակներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ 1. Ականազերծման աշխատանքներին օժանդակություն ցուցաբերելու, հնարավոր ականային պատահարների դեպքում տուժած ականազերծողներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու և մոտակա

	<p>ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</p>	<p>բժշկական կենտրոն տեղափոխելու համար, ինչպես նաև այցելություններ ականներից տուժած անձանց բժշկական խորհրդատվություն տրամադրելու նպատակով՝ շտապօգնության մեքենայի և համալրող բժշկական սարքերի ձեռքբերման ծառայությունների իրականացում 32,208,780 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 8-ից մինչև 2022 թվականի մարտի 31-ը:</p> <p>2. Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի թիրախային դպրոցներում ականների վտանգի իրազեկման և առաջին բուժօգնության դասընթացների իրականացման նպատակով՝ 750 հատ պաստառների և 500 հատ բրոշյուրների տպագրական ծառայությունների իրականացում 6,835,416.67 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 8-ից մինչև 2022 թվականի մարտի 31-ը:</p> <p>3. Ծրագրի աուդիտ՝ 790,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 8-ից մինչև 2022 թվականի մարտի 31-ը:</p>
10.	<p>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Նախատեսվող ապրանքների և ծառայությունների ձեռքբերում.</p> <p>1. Ծրագրի իրականացման նպատակով շտապօգնության մեքենայի ձեռքբերում 26,853,780 դրամ արժողությամբ:</p> <p>2. Շտապօգնության մեքենայի համալրող բժշկական սարքերի ձեռքբերում – 5,355,000 դրամ արժողությամբ:</p> <p>3. Ականների վտանգի իրազեկման և առաջին բուժօգնության 750 հատ պաստառների և 500 հատ բրոշյուրների տպագրական ծառայությունների ձեռքբերում 6,835,416.67 դրամ արժողությամբ:</p> <p>4. Ծրագրի աուդիտ 790,000 դրամ արժողությամբ:</p>
11.	<p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակեր- պական ծախսերը</p>	<p>Ծրագրի աուդիտ 790,000 դրամ:</p>
12.	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման</p>	<p>Ծրագրի շրջանակներում պարտադիր կերպով համագործակցություն է հաստատվելու ՀՀ տարած- քային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզպետարանների, համայնքապետարանների, «Հումանիտար ականագերծման և փորձագիտական</p>

	մարմինների, այլ կազմակերպությունների հետ	կենտրոն» (ՀԱՓԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության հետ՝ որպես Հայաստանի Հանրապետության ականագերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ):
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» N 66-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի պահանջներին համապատասխան կներկայացվեն տեղեկություններ ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների մասին: Ծրագրի իրականացման ընթացքում կտրվեն միջանկյալ և վերջնական հաշվետվություններ, ծրագրի ամբողջ ընթացքի նկատմամբ վերահսկողություն կիրականացնի «Հումանիտար ականագերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Տ. ԱՎԻՆՅԱՆ